USAID FROM THE AMERICAN PEOPLE
URBAN FOUNDATION for sustainable development | ՈՒՐԲԱՆ կայուն զարգացման ՀԻՄՆԱԴՐԱՄ
Global Water Partnership ARMENIA

# *«ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԵՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ» (PURE-WATER) ԾՐԱԳԻՐ*

## ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ, ԹԱՓԱՆՑԻԿ, ՀԱՇՎԵՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Համագործակցության պայմանագիր՝ AID-111-A-17-00005

**Ծրագրի անվանումը**՝ Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում
**Ֆինանսավորող**՝ Ամերիկայի միացյալ նահանգների Միջազգային զարգացման գործակալություն (ԱՄՆ ՄԶԳ)
**Ծրագրի իրականացնող**՝ «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ, ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոն և «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ:

*Սույն փաստաթուղթը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները/կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:*

| N | Գործողություն/միջոցառում | Պատասխանատու կատարող և համակատարող | Կատարման վերջնաժամկետ | Ֆինանսավորման աղբյուր | Օբյեկտիվ վերստուգելի չափանիշ |
|---|---|---|---|---|---|
| I | **ՀՀ ջրային օրենսդրության ոլորտի մի շարք առանցքային իրավական ակտերի ընդունում և ՀՀ ջրային օրենսգրքում ու հարակից իրավական ակտերում հասկացությունների սահմանում և/կամ հստակեցում** | | | | |
| 1 | «Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2018 | Պետական բյուջե | «Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծ |
| 2 | «Խմելու ջրի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի մշակում | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ բնապահպանության նախարարություն | 2020 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | «Խմելու ջրի մասին» ՀՀ օրենքիհայեցակարգ |
| 3 | «Ոռոգման ջրի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի մշակում | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային պետական կոմիտե<br><br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ բնապահպանության նախարարություն | 2019-2020 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | «Ոռոգման ջրի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգ |
| 4 | Ոռոգման ջրի որակի ստանդարտների մշակում | ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | 2018-2020 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | Ոռոգման ջրերի ստանդարտների նախագծեր |
| 5 | ՀՀ ջրային օրենսգրքում նոր հասկացությունների սահմանում, գործող հասկացությունների հստակեցում | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային պետական կոմիտե<br><br>ՀՀ հանրային ծառայությունները | 2018-2019 | Պետական բյուջե | «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կարգավորող հանձնաժողով | | | |
| II | **Ջրային ռեսուրսների պետական մոնիթորինգի և ջրային ռեսուրսների պետական կադաստրի համակարգի բարելավում, տեղեկատվության մատչելիության կառուցակարգերի կատարելագործում** | | | | |
| | Ամրագրել խմելու և ոռոգման ջրի մատակարարման հետ կապված ծառայությունների նկատմամբ հանրային հսկողության համակարգ՝ սահմանելով դրա մեթոդաբանությունը և չափորոշիչները: | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային պետական կոմիտե<br><br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով | 2019-2020 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | Խմելու և ոռոգման ջրի մատակարարման հետ կապված ծառայությունների նկատմամբ հանրային հսկողության ներդրման հայեցակարգի նախագիծ |
| 1 | «Ջրային ռեսուրսների մոնիթորինգի իրականացման և հաշվետվությունների գրանցման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման վերանայում՝ սահմանելով մոնիթորինգը որպես պարբերական գործընթաց | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2018-2019 | Պետական բյուջե | «Ջրային ռեսուրսների մոնիթորինգի իրականացման և հաշվետվությունների գրանցման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ |
| 2 | «Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագծում սահմանել մոնիթորինգի սկզբունքները և մեթոդաբանությունը, տարբեր ռեսուրսների մոնիթորինգի առանձնահատկությունները | ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն | 2018-2019 | Պետական բյուջե | «Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծ |
| 3 | Բնապահպանական մոնիթորինգի տվյալներն արտացոլող միասնական առցանց հարթակի ստեղծում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2020-2022 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | Բնապահպանական մոնիթորինգի տվյալներն արտացոլող միասնական առցանց հարթակ |
| 4 | Ջրային ռեսուրսների օգտագործման, պահպանության, ինչպես նաև տվյալ ոլորտի ծառայությունների | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2019-2020 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | «Ջրային ռեսուրսների օգտագործման, պահպանության, ինչպես նաև տվյալ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | նկատմամբ հանրային մոնիթորինգի ինստիտուտի կայացման համար իրավական հիմքերի ստեղծում | | | | ոլորտի ծառայությունների նկատմամբ հանրային մոնիթորինգի ինստիտուտի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ |
| 5 | www.wrma.am կայքում մատչելի դարձնել տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների բովանդակությունը | ՀՀ բնապահպանության նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն | 2018-2019 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | Հանրամատչելի ջրօգտագործման թույլտվություններ www.wrma.am կայքում |
| 6 | Էկոլոգիական (բնապահպանական) տեղեկատվության մատչելիության ռեժիմի, ներառյալ` անհրաժեշտ սահմանումների և առանձնահատկությունների օրենսդրական ամրագրում | ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | 2019-2020 | Պետական բյուջե | Համապատասխան իրավական ակտերի նախագծեր |
| 7 | Ջրային ոլորտին առնչվող տեղեկատվության օրինակելի ցանկի մշակում ՏԻՄ-երի համար | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | 2018-2019 | Պետական բյուջե | Ջրային ոլորտին առնչվող տեղեկատվության ցանկ |
| **III** | **Ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման ընթացակարգի կատարելագործում և ջրօգտագործման թույլտվության պայմանների վերանայում** | | | | |
| 1 | Ջրի ազգային խորհրդի կազմում բնապահպանական հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների և ակադեմիական կառույցների ներկայացուցիչների ներգրավում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2018-2019 | Պետական բյուջե | «Ջրի ազգային խորհրդի կանոնակարգն ու կազմը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ |
| 2 | Ջրօգտագործման սահմանային | ՀՀ բնապահպանության նախարարության Ջրային | 2019-2020 | Միջազգային դոնոր | «Ազատ ջրօգտագործման |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | մեծությունների և այլ չափանիշների հստակեցում՝ որպես ազատ և հատուկ ջրօգտագործման տարանջատման հիմք | ռեսուրսների կառավարման գործակալություն | | կազմակերպություններ | կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ |
| 3 | Ջրօգտագործման թույլտվությունների սպառիչ ցանկի սահմանում՝ ըստ նպատակների և առաջնահերթության | ՀՀ բնապահպանության նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն | 2019-2020 | Պետական բյուջե | «ՀՀ ջրային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ |
| 4 | Ջրօգտագործման թույլտվությունների էլեկտրոնային հայտի ներկայացման գործիքի և համապատասխան կարգի մշակում | ՀՀ բնապահպանության նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն | 2018-2019 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | «Հայաստանի Հանրապետության 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ<br><br>«Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը, ջրօգտագործման թույլտվության տրամադրման, ջրօգտագործման թույլտվության երկարաձգման կարգերը, ջրաղբյուրի, հորատանցքի անձնագրերի և հիդրոերկրաբանական հորատանցքի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքի ձևերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ |
| 5 | Ջրօգտագործման թույլտվության ձևաթղթի կառուցվածքի և բովանդակության վերանայում | ՀՀ բնապահպանության նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն | 2018-2019 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | «Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը, ջրօգտագործման թույլտվության տրամադրման, ջրօգտագործման թույլտվության երկարաձգման կարգերը, ջրաղբյուրի, հորատանցքի անձնագրերի և հիդրոերկրաբանական հորատանցքի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքի ձևերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ |
| IV | **Ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին հանրային մասնակցության կառուցակարգերի կատարելագործում** | | | | |
| 1 | Պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերը հավատարմագրային կառավարման հանձնելու մրցութային հանձնաժողովի և պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերը օգտագործման իրավունքով կոնցեսիոն պայմանագրով հանձնելու մրցութային հանձնաժողովի կազմի իմպերատիվ սահմանում՝ | ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտե<br><br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | 2018-2019 | Պետական բյուջե | «Պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգը հավատարմագրային կառավարման հանձնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | հասարակական կազմակերպության ներգրավմամբ | | | | «Պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի օգտագործման իրավունքը կոնցեսիայի պայմանագրով փոխանցելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ |
| 2 | Համայնքների ղեկավարների և ՏԻՄ աշխատակազմի իրազեկվածության մակարդակի բարձրացում համայնքային սեփականության, և մասնավորապես՝ ջրային համակարգերի տնօրինման վերաբերյալ | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտե | 2018-2022 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | Համայնքային սեփականության տնօրինման վերաբերյալ ուսուցման ծրագիր և ուղեցույց |
| 3 | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության շրջանակներում հանրային քննարկումների ընթացակարգի կատարելագործում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2018-2019 | Պետական բյուջե | «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ |
| 4 | Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների ընթացակարգի կատարելագործում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2018 | Պետական բյուջե | «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ՀՀ Կառավարության որոշման նախագիծ |
| 5 | Ջրօգտագործման թույլտվությունների հայտերի վերաբերյալ հանրային ծանուցման և հանրային մասնակցության ընթացակարգի կատարելագործում | ՀՀ բնապահպանության նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն | 2018-2019 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | «Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից մշակված փաստաթղթերին հասարակայնության ծանուցման և հրապարակայնության կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ |
| 6 | ՀՀ բնապահպանության նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության էլեկտրոնային կայքի բարելավում՝ ջրօգտագործման թույլտվությունների հայտերի վերաբերյալ հանրային ծանուցման և մասնակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով | ՀՀ բնապահպանության նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն | 2018-2020 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | ՀՀ բնապահպանության նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության բարելավված էլեկտրոնային կայք |
| V | **Ջրօգտագործողների ընկերությունների գործունեության բարելավում և ՋՕԸ-երի մասնակցային կառավարման ոլորտի իրավական ակտերի կատարելագործում** | | | | |
| 1 | Ոռոգման ջուր մատակարարելու պայմանագրի տիպային ձևի վերանայում | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտե<br><br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2019-2020 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | «Ոռոգման ջրի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու, ոռոգման ջրի մատակարարման օրինակելի ձևը սահմանելու և ՀՀ Կառավարության 2000 թվականի հուլիսի 27-ի N418 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ |
| 2 | Ոռոգման ջրի տարբերակված սակագների, տարաժամկետ վճարման գրաֆիկի սահմանում | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտե<br><br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2019-2020 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | «Ոռոգման ջրի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու, ոռոգման ջրի մատակարարման օրինակելի ձևը սահմանելու և ՀՀ Կառավարության 2000 թվականի հուլիսի 27-ի N418 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ |
| 3 | Ոռոգման ջրի սակագնի սուբսիդավորման համակարգի վերանայում | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտե<br><br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br><br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2020-2021 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | «Ջրօգտագործողների ընկերությունների պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնադրույթները և մատակարարված ոռոգման ջրի կորուստների նորմաները հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ |
| 4 | «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» օրենքի վերանայում | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտե | 2019-2020 | Պետական բյուջե | «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | | | մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ |
| VI | **Ջրօգտագործողների, խմելու ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման, ոռոգման ջրամատակարարման ծառայություններից օգտվողների շահերի պաշտպանության կառուցակարգերի կատարելագործում** | | | | |
| 1 | Ջրի ազգային խորհրդի կազմում գործող Վեճեր լուծող հանձնաժողովի, Կանոնակարգող խորհրդի և Ջրօգտագործողների ընկերություններում ձևավորվող Վեճեր լուծող հանձնաժողովների գործունեության արդյունավետության բարձրացում | ՀՀ Կառավարություն<br><br>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտե | 2020-2022 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | Ջրի ազգային խորհրդի կազմում գործող Վեճեր լուծող հանձնաժողովի, Կանոնակարգող խորհրդի և Ջրօգտագործողների ընկերություններում ձևավորված Վեճեր լուծող հանձնաժողովների կանոնադրություններում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծեր<br><br>Վերոգրյալ մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված հզորությունների զարգացման միջոցառումներ |
| 2 | Հանրային ծառայությունների մատուցման, այդ թվում՝ ջրօգտագործման բնագավառի վեճերի լուծման համար հաշտարարի կամ միջնորդի ինստիտուտի ստեղծում | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտե | 2020-2022 | Միջազգային դոնոր կազմակերպություններ | Հանրային ծառայությունների մատուցման ոլորտում հաշտարարի ինստիտուտն ամրագրող իրավական ակտերի նախագծեր |
| 3 | ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համալրում բնապահպանության ոլորտի մասնագետներով | ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ<br><br>ՀՀ ֆինանսների նախարարություն | 2020-2021 | Պետական բյուջե | ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ բնապահպանական ոլորտի մասնագետներով համալրված աշխատակազմ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | Ջրային ռեսուրսների կառավարման, օգտագործման և պահպանության ոլորտի վարչական իրավախախտումների ոլորտի օրենսդրության կատարելագործում | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտե | 2019-2020 | Պետական բյուջե | «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ<br><br>Կամ<br><br>Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագիծ |
| 5 | Վարչական բողոք կամ վարչական հայց ներկայացնելու ժամկետի վերանայում | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ բնապահպանության նախարարություն | 2019-2020 | Պետական բյուջե | «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ |
| 6 | Անվճար իրավաբանական օգնության հնարավորության ամրագրում սոցիալապես անապահով ջրօգտագործողներին իրենց խախտված իրավունքների պաշտպանության նպատակով | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետներում գործող իրավաբանական կլինիկաներ | 2018-2022 | Պետական բյուջե<br><br>Միջազգային դոնոր կազմակերպություններ | «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ |